



## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Եթե Երկրագունդն իր առանցքի շուրջը չպտտվեր նրա վրա երբեք կյանք չէր ծագի: Իրոք, եթե Երկիրն անշարժության մեջ լիներ, նրա Արեգակին ուղղված կողմում երկար ժամանակ կլիներ ցերեկ, իսկ հակառակ կողմում՝ գիշեր: Լուսավորված մասում ջերմաստիճանը այնքան կբարձրանար, որ ոչ մի կենդանի էակ երկար չէր դիմանա, իսկ չլուսավորված մասում ջերմաստիճանը կիջներ մինչև  $-100^{\circ}\text{C}$ , ինչը կրկին անհնար կդարձներ կենդանի օրգանիզմների գոյությունը:

Գիտությունն ապացուցում է նաև, որ եթե Երկիրն իր առանցքի շուրջը պտտական շարժում չկատարեր, նա չէ ունենա մագնիսական հարկություններ: Իսկ մագնիսական հարկությունները (ասում են Երկրի մագնիսական դաշտը) պաշտպանում է Երկիրը Արևից եկող տարատեսակ լիցքավորված մասնիկներից, ուղղում է դրանք մագնիսական բևեռներ: Առանց մագնիսական դաշտի գոյության Երկրի վրա տիեզերքից և Արեգակից եկող լիցքավորված մասնիկները կոչնչացնեին կենդանի նյութը Երկրի վրա: